

Սյուզաննա Խաչատրյան
ԵՊՀ

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՀԱՄԿԱՑՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հոդվածում ներկայացված են ազգակցական, բարեկամական, ամուսնական հարաբերություններ արտահայտող հասկացությունները տարբեր ձևակերպումներով՝ սկսած հին ժամանակներից մինչ այսօր: Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ աստվածաշնչյան հասկացությունների մի շերտը՝ որպես ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապերի արտահայտիչ, հենվում է հնագույն մարդաբանական պատկերացումների և նույնքան հնագույն էվֆեմիզմի դրսևորումների վրա, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում իբրև այլաբանությունների (օրինակ՝ շրջասույթի) առաջացման աղբյուր:

Հիմնաբառեր. արյուն, մերձավորություն, Աստվածաշունչ, հասկացույթ, գերհասկացույթ, էվֆեմիզմ, թաբուավորում, այլաբերություններ, ազգակցական կապեր:

Հասկացույթը առաջին հերթին բնութագրվում է իբրև ազգալեզվամշակութային կյանքի լեզվական արտահայտություն կամ հոգևոր կյանքի և մշակույթի թանձրացում՝

տրված համապատասխան հասկացույթի միջոցով (Степанов, 1997:40, Мослова, 2001):

Հասկացույթ եզրույթը լատիներեն *conceptus* բառի թարգմանությունն է: Միջնադարում կոնցեպտուալիզմը (հասկացութաբանությունը), որպես փիլիսոփայական ուղղություն, նշանավորվել է այնպիսի անուններով, ինչպիսիք են ֆրանսիացի փիլիսոփա և տրամաբան Պիեռ Աբելյարը (1972-1142), անգլաիցի փիլիսոփա և աստվածաբան Ուիլյամ Օքքամը (մոտ 1281-1384/9) և ուրիշներ:

Նոմինալիստ ու կոնցեպտուալիստ էր անգլիացի փիլիսոփա Թ. Հոբսը (1588-1679), որի համար ընդհանուր հասկացությունները սոսկ «անուններ էին անունների»: Այնուհետև հասկացույթները բնորոշվել են որպես մի շարք միանման օբյեկտների ընդհանուր անուններ (Кондаков, 1975:263):

Արդի շրջանում հասկացույթները բաժանվում են հիմնականում երկու տեսակի՝ *հասկացույթներ և գերհասկացույթներ*: Հասկացույթներից են, օրինակ, *ընկերը, բարեկամը, մերձավորը, եղբայրը, քույրը, պաշտոնակիցը, երկլեզվությունը, հայազգիները* և այլն: (Թեև նշվածները ես կարող են ենթարկվել վերացարկման ու հանդես գալ իբրև գերհասկացույթներ:

Գերհասկացույթներից են *պատիվը, խղճմտանքը, հրեշտակը, արդարությունը, իրավունքը, Աստված, ճշմարտությունը, հույսը, սերը, հավերժությունը* և այլն (տես՝ Арутюнян, 2008):

Թե՛ սովորական հասկացությունների, թե՛ գերհասկացությունների մեջ շատ են ոչ միայն *ունիվերսալիաները* (ընդհանրությունները), այլև *լեզվամշակութային եզակիությունները*, որոնք բնորոշ են տվյալ ժողովրդին: Բացի դրանից, շատ են տարբեր հասկացությունների բազմանշանակության վրա հիմնված տարաբնույթ դարձվածքները:

Այս ամենի մասին շատ է գրվել, սակայն հասկացությունների, հատկապես *ազգակցական, բարեկամական և ամուսնական* կապերի մասին խոսելիս, չգիտես ինչու, անտեսվում է մի կարևորագույն հանգամանք՝ *անուն* հասկացության հետ կապված մոգարգելքի պարագան:

Բանն այն է, որ շատ ժողովուրդներ, ազգեր և ազգություններ, հինավուրց ավանդույթի համաձայն, չեն տալիս իրենց կամ իրենց մոտիկ, հարագատ մարդու անունը: Եվ եթե անունը չես տալիս, ուստի փնտրվում է մեկ այլ անուն: Օրինակ՝ հայերի մոտ, մասնավորապես Մուշից ու Բիթլիսից 1915-ին գաղթածների, կարծես թե ընդունված չեր կնոջը դիմել իր բուն անունով: Ասենք՝ կնոջ անունը Բուրաստան է. ամուսինը նրան չի կոչում իր բուն անունով, այլ տալիս է մեկ այլ անուն՝ ասելով՝ «*Համբո աղջիկ*», որտեղ «աղջիկը» իր կինն է, իսկ «Համբոն»՝ աները: Թե ինչու է հատկապես ընտրվում այդ դիմելաձևը՝ շատ հին ակունքներ ունի՝ կապված անվան սրբազան լինելու, այն «գաղտնի պահելու» սովորության հետ:

Չ. Չ. Ֆրեզերը նշում է, որ «Ավստրալիայի բնիկները հաճախ իրենց անունները պահում են բոլորից գաղտնի՝ վա-

խենալով, թե թշնամին, իմանալով իրենց անունները, կարող է մոգությանը ի վնաս իրենց օգտագործել այն: Մեկ ուրիշ հեղինակի խոսքերով՝ ավստրալիական բնիկը միշտ էլ խիստ դժկամորեն է ասում իր անունը: Այդ դժկամությունը, անկասկած, բացատրվում է այն վախով, թե տիրելով անվանը՝ կախարհը կարող է վնաս հասցնել մարդուն: Կենտրոնական Ավստրալիայի ցեղերի ամեն մի տղամարդ, կին և երեխա առօրյա գործածական անունից բացի ունի նաև գաղտնի կամ սուրբ անուն, որը ծնվելուց անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց նրան տալիս են ավագները: Այդ անունը հայտնի է միայն լիահաղորդ խմբի անդամներին (Ֆրեզեր, 1989:293):

Անվանումների (անունները տալու) մոգարգելքը տարածվել է աստվածների (օրինակ՝ Ռա աստծու անվան վրա), հանգուցյալների անունների, անձնանունների, ազգականների անունների վրա: *Նուսֆորների* մոտ (հոլանդական նոր Գվինեա) ամուսիներն Բարեկամներին արգելվում է անուններով կոչել միմյանց:

Թաբուավորվածների շարքին են դասվում *կինը, զոքանչը, աները, քեռիները, մորաքույրները, հորեղբայրները, հորաքույրերը, կնոջ մորաքույրերն ու աներոջ եղբայրները, կնոջ սպայր, քույրերն ու եղբայրները, կնոջ ու տղամարդու ընտանիքների անդամները* (կա մի բացառություն. տղամարդը կարող է անունով կոչել իր աներձագին) (Ֆրեզեր, 1989:299):

Այսպիսով, թաքուավորելով անունները՝ արգելք դնելով նրանց վրա, կամա թե ակամա զարկ է տրվել նոր անունների կազմավորմանը, որոնք էլ հենց ազգականների, բարեկամների, և ամուսնական հարաբերությունների անվանումներն են. *հարս, փեսա, հայր, մայր, բարեկամ, քույր, եղբայր, խնամի, տատ, պապ, թոռ, ծոռ* և այլն: Այդ անունները կարծես դարձել են յուրատեսակ կոդեր, ծածկանուններ, որոնք թաքցրել են մարդկանց իսկական սուրբ, մի ինչ-որ վերին գաղտնի նշանակություն ունեցող անունները:

Դրանց առաջացմանը և շատացմանը ազդակել են ոչ միայն թաքուավորումներն ու մոգարգելքները, այլև մարդ արարածին հատուկ, բնածին զգացումներն ու բարոյագեղազիտական ընկալումները: Այս պատճառով է, որ ոչ մի լուրջ մարդ իրեն թույլ չի տա իր հորը դիմել անունով կամ սպիտակահեր ծերունուն կոչել նրա անվամբ:

Մարդկային պատմությունը, կրոնական ու ազգաբանական պատկերացումները վկայում են, որ ազգակցական կապերի հիմքերը նույն արյունն ունենալու և նույնականացման գործոններն են: Արյան մերձավորությամբ է որոշվում մերաձավորության աստիճանը, ուստի և արյունը համարվում է սուրբ: Կա հայկական ժողովրդական դարձվածք *«Արյունը ջուր չի դառնա»*: Արյունն է վկայում, որ տվյալ անձինք կրում են նույն արյունը, ուստի և նույնական են միմյանց արյունով. *«Մեր մեջ հոսում է նույն արյունը»*: Մարդիկ միմյանց հետ բարեկամանում են ոչ միայն արյան, այլև

հոգևոր հարազատության պատճառով. դաշն են կնքում միմյանց հետ, խնամփանում կամ ընկերանում

Արյան և նույնականության, ինչպես նաև սրբազան արգելքների և ծեսերի վրա հիմնված ազգակցականությունը, բարեկամությունը և ամուսնական դաշինքը իր արտահայտությունն է գտել նաև Սուրբ Գրքում, հատկապես՝ «Ղևտականում», որտեղ Աստվածների Աստվածը կամենում է իր համար սուրբ ժողովուրդ ստանալ, ավելին՝ մի սուրբ ընտանիք, որտեղ մեկընդմիջտ որոշված են յուրաքանչյուր պարտավորություններն ու իրավունքները, և մեղքն ու շնորհը զատորոշված են միմյանցից: Մինչ համապատասխան պատվիրաններ տալը, Տերերի Տերը պատվիրում է սուրբ պահել արյունը:

For it is the blood that makes atonement, by reason of the life” (Levit 17:11)

Քանզի հոգիին համար քավություն ընողը արիւնն է»: (Ղևտ. 17:11)

Այս և հետագա օրինակները բերվում են Աստվածաշնչի արևմտահայերեն տարբերակից, քանի որ այն ընդհանուր շատ բաներ ունի Սուրբ Գրքի անգլերեն տարբերակի, այսինքն՝ եբրայական կանոնի հետ:

None of you shall approach to any that is near of kin to him, to uncover their nakedness. I am the LORD. You shall not uncover the nakedness of your father, which is the nakedness of your mother, she is your mother, you shall not uncover her nakedness. (Levit 18:6-7)

Բնավ մէկը իր մօտ ազգականին թող չմօլռենայ անոր մերկութիւնը քանալու համար: Ես եմ Տէրը: Քու հորդ մերկութիւնը կամ քու մօրդ մերկութիւնը մի քանաք. Անիկա քու մայրդ է, անոր մերկութիւնը մի քանաք» (Ղևտ. 18:6-7)

Ընդգծյալները փոխաբերությամբ արտահայտված դարձվածքներն են, յուրատեսակ էվֆեմիզմներ, որ փոխարինում են *կենսակցել* հասկացությանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ արյունը և առհասարակ արյունակցական կապերը ի սկզբանե (Ծննդոց գրքից սկսած) համարվել են սուրբ, ուստի ազգականների հետ «**մոտեցումը**» համարվել է **անսուրբ արյունապղծություն**: Հիշենք, օրինակ, Ծննդոց գրքի այն հատվածը, երբ երկրի վրա առաջին անգամ եղբայրը՝ Կայենը, թափում է եղբոր՝ Աբելի, արյունը: Ի տես այս արյունահեղության Աստված հարցնում է Կայենին.

Then the LORD said to Cain “Where is Abel your brother?” He said, “I do not know, am I my brother’s keeper?” The voice of your brother’s blood is crying to me from the ground...” (Ծննդ. 4:9-10)

Եվ Եհովան ասաց Կայենին. «Ո՞ր է քո եղբայր Աբելը»: Եւ նա ասաց. «Չգիտեմ. միթե՞ Ես եղբորս պահապանն եմ»: Եւ նա ասաց. «Ի՞նչ էս արել. Քո եղբոր արիւնի ձայնը երկրիցը բողոքում է դէպի ինձ...» (Ծննդ. 4:9-10):

Ոճիրը տեղի է ունենում մերձավորագույն ազգականի՝ եղբոր նկատմամբ, ում արյունը («արեան ձայնը») Աստծուն բողոքում է գետնից (արևելահայերենում՝ «բողոքում է «երկրից»)։ Բերված օրինակներում ազգակցական–արյունակցական մերձավորագույն կապ արտահայտող հասկացույթներն են *հայրը, մայրը, եղբայրը*, որոնց միջև պետք է պահպանվեն սուրբ հարաբերություններ։

Անդրադառնալով «Ղևտական» գրքի 18-րդ գլխին՝ այնտեղ գտնում ենք, մասնավորապես, ամուսնական կանոններ ու արգելանք-հրամաններ՝ կապված մոտ ազգականների միջև փոխհարաբերությունների հետ.

You shall not uncover the nakedness of your father's wife's daughter, begotten of your father, since she is your sister. (Levit 18:11)

Քու հորդ կնոջ աղջկան մերքութիւնը, քու հորմէղ ծնած քոյրդ ըլլալով, անոր մերկութիւնը մի' քանար: (Ղևտ. 18:11)

You shall not uncover the nakedness of your father's wife's sister, she is your father's near kinswoman. (Levit 18:12-13)

Քու հորդ քրոջ մերկութիւնը մի' քանար: Անիկա քու հորդ ազգականն է: Քու մօրդ քրոջ մերկութիւնը մի' քանար, վասն զի անիկա քու մօրդ ազգականն է: (Ղևտ. 18:12– 13)

You shall not uncover the nakedness of your daughter-in-law, she is your son's wife, you shall not uncover her nakedness. (Levit 18:15)

Քու հարսիդ մերկութիւնը մի բանար: Անիկա քու որդիիդ կինն է. անոր մերկութիւնը մի' բանար: (Ղևտ. 18:15)

Բերված օրինակներում, նշված ազգականներից բացի, հիշատակվում են նաև եղբոր կինը, կնոջ աղջկա աղջիկը, թոռները (որդու աղջիկը կամ աղջկա աղջիկը) և այլն, որոնք ներկայացնում են ազգակցական կապերի ողջ հիերարխիան: Այդ ամենը տրվում է Ասավածաշնչին բնորոշ լեզվով, որը հարուստ է յուրատեսակ դարձվածքներով:

Այս գլխում հաճախադեպ են դարձվածքները և Էվֆեմիզմները: Կարելի է արձանագրել, որ նույն այդ հասկացությունները (որդի, աղջիկ, հարս և այլն) պատշաճախոսություններ կամ Էվֆեմիզմներ են, որոնք, եթե կարելի է այդպես ասել, սրբության հանդերձանք են հազցնում ազգակցական-բարեկամական կապերի ներկայացուցիչներին՝ նրանց կոչելով ոչ թե բուն անուններով կամ նրանց բուն գործառույթների անուններով, այլ դրանք թաքցնելով:

Այսպիսով, սրբության հանդերձանք հազած հասկացություններ են, օրինակ, *հայրը, մայրը, եղբայրը, հարսը, փեսան* և այլն: Քանի որ այդ հասկացությունները (անունը կրողները) սրբության հանդերձանք ունեն՝ ուստի և նրանց գործողությունները նույնպես քող են կրում իրենց վրա՝ հանդես գալով իբրև *այլաբերություններ* (հուն. *tropos* - դարձ),

այլաբանություններ (*allegoria* – այլաբանություն), փոխաբերություններ կամ պարզապես այլախոսություններ (ռուս. *иносказание*): Ահա այսպիսի քող են կրում իրենց վրա վերոնշյալ գլխում և այլուր գործածված **Էվֆեմիզմները**՝ գեղասությունները (Խլղաթյան, 1976:25): Իհարկե, նշյալ բառերը լրիվ չեն արտահայտում աստվածաշնչյան Էվֆեմիզմների բուն էությունը, նպատակն ու գործառույթները, որոնք ավելի խորքային են և դրանով իսկ ընդարձակում են *Էվֆեմիզմ* կամ *գեղասություն* հասկացույթի իմաստանշանային բովանդակությունը, միաժամանակ հիմք են հանդիսանում մի շարք դարձվածային միավորների կազմավորման համար, որպիսիք են «Նրա մերկությունը մի՛ բացիր», «Նրանց մերկությունը քոնն է», «Ոչ ոք իր մոտ ազգականին թող չմոտենա» և այլն:

Ազգականի (ազգականուհու) մերկությունը չբացելու կարգադրությունը և ինքը «Մերկությունը մի բաց» արտահայտությունը հեռագնա զուգորդումներ ունեն կապված Ադամի և Եվայի՝ դրախտում սատանայի (օձի) դրդմամբ մերկանալու երևույթի և ընդհարապես մերկությունը ծածկելու հորդորի հետ: Պետք է ասել, որ նույնատիպ հեռագնա-զուգորդական կապեր ունեն նաև մյուս՝ Էվֆեմիզմի հիման վրա առաջացած դարձվածքային միավորները: Մի ուշագրավ իրողություն, որը հիմնականում հատուկ է աստվածաշնչյան Էվֆեմիզմներին: Վերջիններս բազմատեսակ են և բազմաթիվ, արժանի համակողմանի նորանոր ուսումնասիրությունների: Բայց կատարված մի քանի դի-

տարկումներն էլ ցույց են տալիս, որ աստվածաշնչյան հասկացությունների մի շերտը՝ որպես ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապերի արտահայտիչ, հենվում է հնագույն մարդաբանական պատկերացումների և նույնքան հնագույն էվֆեմիզմի դրսևորումների վրա, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում իբրև այլաբերությունների առաջացման աղբյուր: Դրանք ընդարձակում են մեր գիտելիքները ինչպես կրոնական, մարդաբանական, մշակութաբանական առումներով, այնպես էլ լեզվամշակութային մի ուրույն երևույթի՝ էվֆեմիզմի հիման վրա կազմավորված այլաբերությունների ուսումնասիրության առումով:

Գրականության ցանկ

1. Ֆրեզեր Ջ.Ջ., *Ոսկե ճյուղը*, Երևան, 1989:
2. Арутюнян Н. Л. *Лингвокультурологический анализ трансцентричных цверхконцептов «вера» «бог» «душа» «любовь» «надежда»*, Ереван, “Зангак 97”, 2008.
3. Воркачев С. Г., *Лингвокультурология, языковая личность, концепт, становление антропо-центрической парадигмы в языкознании // Филологические науки*, 2001.
4. Конурбаев М. Э., *Библия короля Иакова в лингвопоэтическом освещении*, Москва, 1998.
5. Степанов Ю.С., *Словарь русской культуры, опыт исследования*, Москва, 1997.
6. Маслова В.А., *Лингвокультурология*, Москва, 1997.

Բառարաններ և տեղեկատուներ

1. Խլարթյան Ֆ. Հ. *Ոճարանական տերմինների բառարան-տեղեկատու*, Երևան, 1976:
2. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ. *Գրականագիտական բառարան*, Երևան, 1980:
3. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա. *Հայոց լեզվի դարձվածարանական բառարան*, Երևան, 1975:
4. Кондаков Н. И., *Логический словарь-справочник*, Москва, 1975.

Աղբյուրների ցանկ

1. *Աստվածաշունչ*, Ս. Էջմիածին, 1994:
2. *The Holy Bible H.J.* (1952).
3. *Holy Bible* (1986) *The Gideons International*, New King James, Version.

СЮЗАННА ХАЧАТРЯН – *Родственные и супружеские концепты по библии в армянском и английском языках* - В статье рассматриваются разные толкования термина **концепт** с древних времён по сей день. В настоящее время концепты делятся в основном на два вида: **концепты** и **сверхконцепты**. К первому виду относятся, например, **товарищ, родственник, брат, сестра** и т. д., ко второму - **честь, ангел, надежда, любовь**. Как утверждает сама история человечества, основой родственных связей является кровь, которая считается свя-

той. Проведённый анализ показывает, что часть библейских концептов, как показатель родственных и супружеских связей, основывается на старинных антропологических представлениях, которые являются источником для новообразований с новыми коннотативными значениями.

Ключевые слова: кровь, близость, Библия, концепт, сверх-концепт, эвфемизм, табуирование, аллегория, родственные связи.

SYUZANNA KHACHATRYAN - Concepts of Kinship and Matrimonial Bonds According to the Bible in Armenian and English - The article touches upon various interpretations of the term concept since ancient times to this day. At present concepts are divided into two groups: the first includes **friend, relative, brother, sister**, the second includes hyper-concepts, such as **honor, angel, hope, love**. As the history of mankind shows, kinship bonds are based on the idea of blood, which is considered to be sacred. The analysis conducted reveals that some Biblical concepts, as indicators of kinship bonds, are based on ancient anthropological notions, which serve as a source for new coinages with new connotative meanings.

Key words: blood, intimacy, Bible, concept, hyper-concept, euphemism, tabooing, allegory, kinship bonds.